յոց մէջ առևանգումն երբեմն գոյութիւն է ունեցել իբրև մի դրական իրաւաբանական սովորոյթ։ Սակայն, ինչպէս ներկայ յօդուածիս մէջ ակնարկել ենք, առևանգումը ժամանակի ընթացքում կամաց կամաց չքացել է ասպարիզից։ Այդ վերացման նպաստող հանգամանքներն եղել են մի կողմից՝ քրիստոնէական վարդապետութեան ազդեցութիւնը, միւս կողմից էլ՝ սոցիալ—իրաւաբանական յարաբերութիւնների աստիճանական զարգացումը։ Մեզ արդէն յայտնի է, որ հայոց օրէնսդրութեան մէջ գոյութիւն ունէին մի շարք արդելական կանոններ, որոնք խմբագրուել են եկեղեցական ժողովներում մեր սուրբ հայրերից առևանգման դէմ իբրև մի անբարոյական երևոյթի, իբրև հակաքրիստոնէական հիմնարկութեան։ Այդ հիման վրայ պէտք է ենթադրել, թէ ինչ հզօր դեր էր խաղում հոգեւորականութիւնը մեր պատմութեան զարգացման մէջ և թէ հայ-հոգևոր վարչական մարմինները որքան ճիգ էին թափում իրենց ազդեցութեամբ արմատախիլ անելու ժողովրդի կեանքից քրիստոնէութեան դաղափարին հակառակ, կամ ինչպէս իրենք էին ասում՝ հեթանոսական սովորութիւնները։

Միւս կողմից էլ՝ երբ քաղաքացիական կեանքը զարգանալով առաջ է բերում որոշ հասարակական հիմնարկութիւններ, երբ ժողովրդներից, ազգութիւններից կազմակերպւում են պետական մարմիններ, որոնց նպատակն է ներքին ու արտաքին խաղաղութեան ու կարգապահութեան վրայ հոգ տանել, որպէսզի կարելի լինէր ընթանալ յառաջդիմութեան ուղիով, ինքնըստինքեան առևանգումը սկսում է չքանալ ասպարիզից։ Առևանգումն արդէն համարւում է պետական կարգապահութեան սկզբունքին հակառակ ու ներքին հասարակական խաղաղութիւնը խանգարող մի երևոյթ։ Ակներև է, որ պետական վարչական մարմինները միջոցների և այն էլ խիստ միջոցների էին ձեռնարկում առևանգման գոյութիւնը կասեցնելու նպատակով։ Շնորհիւ այդ տեսակ միջոցների, առևանգումն, յի-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան